

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) համայնքային ծառայություն՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներից անկախ մասնագիտական գործունեություն, որը կատարվում է քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում (այսուհետ՝ աշխատակազմ) Հայաստանի Հանրապետության օրենքներով այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով.»:

Հոդված 2. Օրենքի ամբողջ տեքստում «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերը փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
 «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկություն	Եզրակացություն
1	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Նաղդալյան</p>	<p>Առաջարկում եմ լրամշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը՝ առաջարկվող լրացումը տեղափոխելով օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման հիմնական դրույթներից հետո:</p>	<p>Ընդունվել է, առաջարկվող լրացումը տեղափոխվել է 11-րդ հոդվածի 3-րդ մասից հետո:</p>
2	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում առաջարկվում է լրացնել նոր 3-րդ և 4-րդ հոդվածներ՝ հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>ՀՈԴՎԱԾ 3 «ՀՈԴՎԱԾ 48.1. Երևանի գլխավոր ճարտարապետը</p> <p>«1. Երևանն ունի Երևանի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը:</p> <p>2. Երևանի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը»:</p> <p>ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը «վարչական շրջանների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի,» բառերով:</p>	<p>Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 3-րդ և 4-րդ հոդվածներով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: Միաժամանակ, առաջարկության ընդունման կապակցությամբ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում</p>
		<p>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության</p>	<p>Ընդունվել է, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»</p>

	<p>մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում հոդվածների առանձին-առանձին թվարկելու փոխարեն՝ մեկ ընդհանուր դրույթով սահմանել, որ «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հոլովածներով:</p>	<p>ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	---	--